## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին.

Կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Վերոհիշյալ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն Ընկերության ղեկավարության պատասխանատվությունն է: Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Մենք աուդիտի ենք ենթարկել Խմբի 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա պատրաստվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2012թ. հունիսի 28-ի մեր եզրակացությունում մենք կարծիք ենք արտահայտել առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ճշմարիտ են ներկայացնում բոլոր էական առումներով Խմբի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են և որոնց վերաբերյալ մենք դրական կարծիք ենք արտահայտել:

Խմբի ֆինանսական վիճակի, տվյալ ժամանակահատվածում գործունեության արդյունքների և մեր անցկացրած աուդիտի շրջանակների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել այդ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար հիմք հանդիսացած համախմբված ֆինանսական հաշվետվությունների և մեր աուդիտորական եզրակացության հետ միասին:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC.

28 հունիսի 2012թ.
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

*Այս փաստաթուղթը իրենից ներկայացնում է անգլերեն տարբերակի հայերեն թարգմանությունը:*
*Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:*

*PricewaterhouseCoopers Armenia LLC*
*1 Northern Ave., Business Center NORD, 5th floor, Yerevan 0001, Republic of Armenia*
*T: +(37410)592159, F: +(37410)501341, www.pwc.com/am*

| *մլն. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբերի 2011թ. | 31 դեկտեմբերի 2010թ. |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 346,044 | 330,567 |
| Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ | 11,258 | 12,508 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | - | 262 |
| Ավանդներ բանկերում | - | 15 |
| Տրամադրված փոխառություններ | 181 | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 5,914 | 8,470 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 525 | 269 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **363,922** | **352,091** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 7,158 | 11,060 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 793 | 430 |
| Տրամադրված փոխառություններ | 136 | 219 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 29,201 | 21,706 |
| Շահութահարկի գծով կանխավճար | 1,238 | 1,384 |
| Ավանդներ բանկերում | 574 | 571 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11,084 | 2,089 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **50,184** | **37,459** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **414,106** | **389,550** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Կանոնադրական կապիտալ | 312,072 | 312,072 |
| Կուտակված վնաս | (28,955) | (13,530) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **283,117** | **298,542** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 59,010 | 44,708 |
| Ակտիվներին առնչվող շնորհներ | 513 | 551 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **59,523** | **45,259** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 27,788 | 11,169 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 43,678 | 34,580 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **71,466** | **45,749** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **130,989** | **91,008** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **414,106** | **389,550** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել 2012թ. հունիսի 28-ին:

Վարդան Հարությունյան
Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ոսկանյան
Գլխավոր հաշվապահ

| մլն.ՀՀ դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Հասույթ | 150,278 | 125,876 |
| Վաճառքի ինքնարժեք | (151,519) | (126,382) |
| **Համախառն (վնաս)/շահույթ** | **(1,241)** | **(506)** |
| Այլ գործառնական եկամուտ | 2,105 | 3,522 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (7,030) | (7,471) |
| Այլ գործառնական ծախսեր | (2,443) | (4,904) |
| **Գործառնական վնաս** | **(8,609)** | **(9,359)** |
| Ֆինանսական եկամուտ | 226 | 2,275 |
| Ֆինանսական ծախսեր | (4,393) | (5,341) |
| **Վնաս նախքան հարկումը** | **(12,776)** | **(12,425)** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | (2,649) | 1,627 |
| **Տարվա վնաս** | **(15,425)** | **(10,798)** |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ | **(15,425)** | **(10,798)** |

| | Ընկերության սեփականատերերին վերագրվող | | |
|---|---|---|---|
| *մլն. ՀՀ դրամ* | Կանոնադրական կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.** | **312,072** | **(2,732)** | **309,340** |
| Ընդամենը համապարփակ վնաս 2010թ. | - | (10,798) | (10,798) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **312,072** | **(13,530)** | **298,542** |
| Ընդամենը համապարփակ վնաս 2011թ. | - | (15,425) | (15,425) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **312,072** | **(28,955)** | **283,117** |

| *մլն. ՀՀ դրամ* | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Վնաս մինչև շահութահարկով հարկումը | (12,776) | (12,425) |
| **Ճշգրտումներ.** | | |
| Մաշվածություն | 10,575 | 11,013 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում | 125 | 73 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում | (527) | (123) |
| Հիմնական միջոցների օտարումից զուտ (շահույթ)/ վնաս | (11) | 3,644 |
| Ստացված շնորհներից եկամուտ | (38) | (44) |
| Փոխարժեքային տարբերություններ | 5,650 | (1,869) |
| Տոկոսային եկամուտ | (226) | (381) |
| Տոկոսային ծախսեր | 168 | 5,341 |
| Եկամուտ շնորհված հողատարածքներից | (768) | (2,885) |
| Պահուստների փոփոխություն | 22 | 237 |
| **Գործառնական դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները** | **2,194** | **2,581** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/ նվազում | (6,294) | 2,821 |
| Պաշարների նվազում | 904 | 961 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ | 12,599 | 7,108 |
| **Շրջանառու կապիտալի փոփոխություններ** | **9,403** | **13,471** |
| Վճարված շահութահարկ | (65) | (565) |
| Վճարված տոկոսներ | (5,824) | (3,676) |
| **Գործառնական գործունեությամբ օգտագործված/գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր** | **3,514** | **9,230** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների գնում | (15,708) | (30,311) |
| Բանկերում ժամկետը լրացած ավանդների մարում | 400 | 270 |
| Նոր ավանդների տեղաբաշխում | (400) | (426) |
| Ստացված տոկոսներ | 222 | 341 |
| Պարտատոմսերի (ձեռքբերում)/օտարում | (122) | (217) |
| Տրամադրված փոխառություններ | (50) | - |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(15,658)** | **(30,343)** |
| **Դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից** | | |
| Հոսքեր տրամադրված փոխառությունների մարումից | 159 | 349 |
| Հոսքեր վարկերից և փոխառություններից | 120,367 | 15,456 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (99,383) | - |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **21,143** | **15,805** |
| Փոխանակման փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (4) | (188) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **2,089** | **7,585** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **11,084** | **2,089** |